

Ավագյան Գ. Ա.

*Նոր մեդիայի և հաղորդակցության
ամբիոնի ասպիրանտ
Էլ. փոստ՝ gayaneavakyan@gmail.com*

ՍՓՅՈՒՌՔՅԱՆ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍԱՄՈՒԼԸ (ԼԻՔԱՆԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՐՔԵՐԱԿԱՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

Բանալի բառեր - մամուլ, ինքնություն, Սփյուռք, Խորհրդային Հայաստան, Լիբանան, սփյուռքյան ինքնություն, «Ազդակ», «Զարթոնք», «Արարատ», կուսակցական պարբերականներ, Լիբանանի հայ համայնք

1. Սփյուռքյան ինքնություն

Ազգային ինքնության մասին սկսում են խոսել, կամ ինքնության խնդիրը դրվում է այն ժամանակ, երբ կա ինքնությունը կորցնելու վտանգ, բայց դեռ կորսված չէ¹: Ազգային ինքնության պահպանումն ամենօրյա խնդիր է հայկական Սփյուռքում: Մի կողմից՝ պետք է պահպանել հայի տեսակը, սակայն օտար միջավայրում այլ բարքեր են, որոնք մերժելը կարող է սոցիալական մեկուսացման տանել, մյուս կողմից՝ մոռանալ ազգայինը, արմատները, ապրել տվյալ երկրի բարքերով, ընդունել նոր մշակույթը և ինտեգրվել հասարակության մեջ: Երրորդ տարբերակը կարող է լինել, ինչպես Պ. Լ. Չեքիյանն է նկարագրում, կանոններով խաղալը, բայց դրանք չյուրացնելը, ուրույն դիմագիծը չկորցնելը կամ էլ որոշ կանոններ փոխելը²: Ի վերջո, էթնիկական այլ հանրույթների հետ շփումն ազդի մտահայեցողության ակունքն է, որի միջոցով մշակութային

¹ Տե՛ս **Պըլտեան Գ.**, Ինքնութեան փորձառութիւն Սփիւռքի մէջ, «Ինքնության հարցեր» տարեգիրք, Եր., 2002, էջ 90:

² Տե՛ս **Չեքիեան Պ. Լ.**, Հայ ինքնութիւն, «Ինքնության հարցեր» տարեգիրք, Եր., 2002, էջ 42:

ավանդույթների, սովորույթների և գաղափարների վերարժևորում է կատարվում³:

Ընդունենք, որ օտարության մեջ հայտնված հայերը չեն կարող գերծ մնալ շփումներից, որոնք աստիճանաբար կրավորական առնչությունից վերածվում են ակտիվ փոխհարաբերության, արժեքների «փոխանակման»: Իսկ նոր սերունդն արդեն մեծանում է՝ երկու արժեքային համակարգերն իր մեջ կրելով, և կախված անհատից, ընտանիքից, շրջապատից՝ համակարգերից մեկը կարող է ավելի ուժեղ ներգործություն ունենալ ու հաջորդ սերնդին փոխանցվել ավելի կամ պակաս չափաբաժնով:

Գ. Պլլտյանը, բացատրելով օտարության մեջ հայտնվածի ինքնության տատանումները, նշում է, որ հարազատի «փոփոխումը» ենթադրում է «այլի» հայտնություն ինքնության մեջ: Ըստ նրա՝ չի կարելի սփյուռքահայի ինքնության հարցին մոտենալ հարազատի և ոչ հարազատի պարզ հակադրությամբ: Ինչը հարազատ է, դառնում է օտար՝ հետո վերստին հարազատ դառնալու համար⁴:

Հարց է ծագում. արդյոք անհրաժեշտ չէ՞ ընդհանրացված ազգային ինքնության փոխարեն տարբերակել Մփյուռքում ապրողի սփյուռքյան ինքնությունը: Այն իր տեսակով հիբրիդ է, որն անպայմանորեն ներառում է մի քանի ինքնություններ ինչպես էթնիկ ծագման, այնպես էլ այն ազգի, որի միջավայրում ապրում է անհատը: Ինքնությունը քարացած չէ, այլ փոփոխվում, ընդլայնվում է, ներառում նոր արժեքներ, որոնք, սակայն, ինքնությանը համահունչ են ու համալրում են այն: Ս. Հովի բնորոշումից բխում է, որ ոչ միայն անցյալը, այլև ապագան է պայմանավորում մեր ինքնությունը, ուստի

³ Ազգամիջյան փոխհարաբերություններին է անդրադառնում նաև **Մ. Մարգարյանը**. «Հարաբերելով համամարդկային արժեքներին՝ ազգի արժույթային համակարգը նոր բովանդակություն ու իմաստ է ստանում և հանդես գալիս տարբեր մակարդակների ես-երի լինելության սահմաններում: Ի հետևանս՝ այն դառնում է անձի, հանրության ինքնության արդիականացման գործընթացը սնուցող միջավայր» (**Մարգարյան Մ.**, Ազգային մտահայեցողություն և ինքնակառավարում, «Ինքնության հարցեր» տարեգիրք, Եր., 2002, էջ 58):

⁴ Տե՛ս **Պլլտեան Գ.**, նշվ. աշխ., էջ 104:

ինքնությունը թե՛ նախկինում որոշակի լինելու և թե՛ հետագայում մեկ ուրիշը դառնալու արդյունք է⁵:

Վ. Սահակյանի դիտարկմամբ՝ ինքնությունն իրավիճակային է. որոշակի հանգամանքներում մեկն է դրսևորվում, այլ միջավայրում՝ մյուսը⁶: Բերենք օրինակ. Լիբանան պետության՝ իր քաղաքացիների համար կազմակերպված ցանկացած միջոցառման՝ լինի ընտրություն թե ժողով, հայը մասնակցում է որպես լիբանանցի, քանի որ ընդունված որոշումներն անդրադառնալու են իր քաղաքացիական գործունեության վրա: Իսկ Մեծ եղեռնի զոհերի հիշատակի ոգեկոչման միջոցառումների կազմակերպմանը նա մասնակցում է իբրև հայ: Սփյուռքում ապրողի կերպարի երկփեղկումն անխուսափելի է դառնում:

Հայ տեսաբան Խ. Թոլոյանը «սփյուռք» երևույթի մասին խոսելիս առանձնացնում է «multilocal»-ի՝ բազմաթիվ վայրերում ապրելու կամ դրանց հետ կապ ունենալու գաղափարը, երբ սփյուռքի ներկայացուցիչը գիտակցում է, որ ևս մեկ վայր կա, որը կարևոր է, որի հետ ոչ ֆիզիկապես, բայց մտովի կապված է⁷:

Առաջնահերթությունը տալով «աղետի փորձառություն»⁸ ունեցող Սփյուռքի սկզբնական սերունդների ձևավորմանը՝ նախընտրելի է դիտարկել Լիբանանում Մեծ եղեռնից հետո կազմավորված հայկական Սփյուռքում ինքնության խնդիրը և դրա արտացոլումը կուսակցական պարբերականներում 1960-ական թվականներին:

⁵ St' u **Hall S.**, Cultural Identity and Diaspora, Identity: Community, Culture and Difference. Jonathan Rutherford ed. London: Lawrence & Wishart, 1990, էջ 225:

⁶ **Սահակյան Վ.**, «Փոփոխվող սփյուռքները. հայեցակարգեր և մոտեցումներ» ամսառային ծրագիր, Հայկական բարձրագույն կրթության նախաձեռնություն, ՀԱՀ, Եր., 10-21 հուլիսի, 2017:

⁷ **Թոլոյան Խ.**, մաս 1, <https://www.youtube.com/watch?v=xvZ74kGxA5w> (տեսագրություն):

⁸ 1915-22 թթ. Հայոց ցեղասպանության գործունը հաշվի առնելով՝ Ռ. Քոհենը հայկական Սփյուռքը տիպաբանում է իբրև «զոհ սփյուռք» (victim diaspora). տե՛ս **Cohen R.**, Global Diasporas: An introduction, Second edition, Taylor & Francis, 2008, էջ 39:

2. Ինքնության հատվածայնության խնդիրը՝ Լիբանանի հայ համայնքի օրինակով

Լիբանանում, ինչպես և այլ երկրներում, հայերը ներկա են եղել նախքան ցեղասպանությունը, սակայն մեծ հոսքը սկսվել է 20-րդ դարասկզբի աղետից հետո: Ի տարբերություն այլ երկրների՝ Լիբանանի ղեկավարությունը հասարակական, կրոնական, մշակութային ու կրթական կյանք ունենալու ազատություն էր տվել հայերին: Որպես արդյունք՝ սկսվել է համայնքային կառույցների կազմակերպված ձևավորումը: Պատահական չէ, որ Լիբանանը համարվում էր Սփյուռքի կենտրոն, կամ փորձ էր արվում այդպիսին դարձնելու, որն ուներ ինքնակազմակերպման հստակ կառույցներ՝ դպրոցից մինչև կուսակցական ակումբ, և ապագա հոգևորական, ուսուցիչ, բժիշկ ու կուսակցական գործիչ էր պատրաստում մյուս գաղութների համար: Այդուհանդերձ, նույնիսկ Լիբանանում դժվար է խոսել միասնական սփյուռքյան ինքնության կամ լիբանանահայի ինքնության մասին: Բաժանվածությունը կուսակցական պատկանելության, քրիստոնեության ճյուղերի հետևորդության, դաշնակցական, ռամկավար կամ հնչակյան թաղամասերի, մշակութային, կրթական ու հասարակական հաստատությունների տարբերակումը՝ ըստ քաղաքական կողմնորոշման, մղում են ենթադրելու, որ լիբանանահայի ինքնության պարագայում ևս գործ ունենք հատվածային ինքնությունների հետ: Ավելացնելով արաբական աշխարհում ամենօրյա կենսագործունեությունը՝ ստացվում է, որ արաբական և հայկական ինքնությունները Լիբանանի հայի մեջ անբաժանելի են:

Դիտարկենք շրթայի հաջորդ օղակը. Լիբանանում հայտնվածի համար ազգային ինքնությունը մեկ բան է, ԱՄՆ-ում հայտնվածի համար մեկ այլ՝ շնորհիվ այն օտարի, որն անպայման առկա է իր մեջ, և օտարի հետ ազգայինի փոխհարաբերության տեսակի: Սրանից բացի՝ կար ինքնության ավելի գլոբալ, «բարիկադային» տարանջատում: ԽՍՀՄ-ում կերտվում էր խորհրդահայի ինքնություն, Սփյուռքում՝ սփյուռքյան ինքնություն, որի համար կարևորվում էր

լեզուն, մշակույթը, Հայ դատը և այլն, և մեկը մյուսին ասես հակակշիռ լինեին մինչև 1960-ականները: 1960-ականներից ԽՍՀՄ-ը սկսեց ստեղծել «ամեն հայի հայրենիքը Խորհրդային Հայաստանն է» գաղափարը⁹:

3. Մամուլը բազմաշերտ ինքնությունների արտահայտիչ

Խորհրդային Հայաստանում, Սփյուռքում և մասնավորապես լիբանանահայի կյանքում տեղի ունեցող խմորումները չէին կարող չարտացոլվել տեղի հայկական մամուլում: Սփյուռքահայի, տվյալ դեպքում՝ Լիբանանում ապրող հայի ինքնության բազմաշերտության արտահայտումը նույնպես կարելի է տեսնել թերթերի հրապարակումներում: Փոխադարձ առնչությամբ նկատելի են նաև մամուլի ուղղակի կամ անուղղակի ջանքերը՝ ազդելու բազմաշերտ ինքնությունների ձևավորման վրա կամ երանգ հաղորդելու ինքնության մասին պատկերացումներին:

Տարբերակումներից մեկը կատարվում է՝ կուսակցական պատկանելությունից կամ գաղափարական կողմնորոշումներից ելնելով, ինչը հաջորդաբար թելադրում է տարբերակում՝ ըստ տվյալ կուսակցության կրթական, մշակութային, կրոնական, պատանեկան, երիտասարդական, անգամ մարզական կառույցների հաճախելիության: Բնականաբար, «Ազդակ»-ը Լիբանանի հայ համայնքի կյանքը ներկայացնում է առավելապես ՀՅԴ, «Զարթոնք»-ը՝ ՌԱԿ-ի, իսկ «Արարատ»-ը՝ Հնչակյան կուսակցության դպրոցի, մարզական ակումբի, կանանց միության և նման կառույցների նախաձեռնությունների միջոցով: Ստացվում է՝ յուրաքանչյուր կուսակցության գաղափարախոսության հետևորդները տարածն արժեքներով կազմավորվող ինքնության կրողներ են: Կուսակցական թերթերն ասես թելադրում են համապատասխան կենսակերպ և հրապարակումների օգ-

⁹ **Փանոսեան Ռ.**, «Ինքնությունների ձևավորումը հայրենիքներում և դրանցից դուրս» թեմայով դասախոսություն, «Փոփոխվող սփյուռքները. հայեցակարգեր և նոտեցումներ» ամառային ծրագիր, Հայկական բարձրագույն կրթության նախաձեռնություն, ՀԱՀ, Եր., 10-21 հուլիսի, 2017:

նությանը ընթերցողի մեջ սերմանում դա: Արտացոլելով տվյալ «կուսակցական» ինքնության կրողների իրական կյանքը՝ թերթերն այդպիսով չափանմուշ են կերտում՝ օրինակելի դարձնելով տվյալ ինքնության մյուս կրողների համար:

Սեկ այլ տարբերակում ծագում է Խորհրդային Հայաստանի ընկալման տարածայնությունից: Հնչակյաններն ու ռամկավարները իրենց պարբերականներով Խորհրդային Հայաստանը հայրենիք էին համարում, հայության կենտրոն, իսկ Լիբանանի ու Սփյուռքի հայերին՝ այնտեղ կատարվող իրադարձություններին անմիջականորեն հետևողներ: Դաշնակցական «Ազգակ»-ը, չժխտելով հայրենիքի գոյությունը, այդուհանդերձ, սահման էր դնում Սփյուռքի և ԽՀ սոցիալիստ հայի կյանքի միջև՝ առավելապես կողքից դիտող-քննադատողի կարգավիճակ ստանձնելով, իսկ կենտրոնում դնելով միացյալ, ազատ, անկախ հայ ազգի գաղափարը, Սփյուռքի հայությանն ու վարչակարգով չտարված ազգակիցներին:

«Արարատ»-ն ու «Զարթոնք»-ը երբեմն անդրադառնում էին ԽՀ վարչական կառույցների առօրյա, արարողակարգային միջոցառումներին՝ ընթերցողի ինքնությունը փորձելով նույն հարթության վրա դնել Հայաստանում ապրողի, անգամ սոցիալիզմի գաղափարակրի կամ սոցիալիստական հանրապետությունների քաղաքացու ինքնության հետ՝ չեղարկելով տարածքային անջրպետը¹⁰: Սակայն նույնացումը կատարվում է միայն Սփյուռքի «հայաստանասերների» պարագայում, նրանց, ովքեր ընդունում են Հայաստանում հաստատված խորհրդային կարգերը, իսկ մյուս թևը, որը նույնացվում է դաշնակցականների հետ, ովքեր իբր դավադիր կապի մեջ են իմպերիալիստական երկրների հետ՝ ընդդեմ Խորհրդային Միության¹¹,

¹⁰ Օրինակ՝ «Սփյուռքահայության լրագրյն գաղակները, արտասահմանեան երկիրների յառաջադիմական ուժերի հետ ուսուսի տուած, հերոսաբար պայքարում են Հոկտեմբերեան Յեղափոխութեան գաղափարների յաղթանակի համար» (Վանիկ, Հոկտեմբերեան Յեղափոխութեան Յիսնամեակին՝ Անտոն Քոչինեանի ճաշին առթիւ, «Արարատ», 24 նոյեմբերի, 1967 թ., թիվ 8):

¹¹ **Անդրեասեան Ա.**, Հայկական դատին նոր հանգրուանը, «Արարատ», 1967 թ., 23 օգոստոսի, թիվ 273:

դուրս է թողնվում շրջանակից¹²: Խորհրդային Հայաստանը ներկայացվում է որպես խաղաղության և ճնշված ազգերի հույսերի մարմնավորում¹³, ինչը դարձյալ բոլշևիկյան գաղափարախոսության արգասիք է: Մասամբ ուրվագծվում է նաև համախորհրդային քաղաքացիության ինքնության առանձնացումը, որը սուր քննադատում է դաշնակցական թերթը՝ նշելով, որ համայնավար գաղափարախոսության հետևորդ սփյուռքահայերը նույնպես հրաժարվել են հայրենիքից, հողից, ազգից, պատմությունից. նրանց համար միևնույնն է՝ Ղարաբաղը հայկական¹⁴ հող է, թե՞ խորհրդային, քանի որ պատկանում է «սովետական հայրենիք ընտանիքին»¹⁴:

Ի տարբերություն «Զարթոնք»-ի և «Արարատ»-ի՝ «Ազդակ»-ը հայ ժողովրդի ներկան ու ապագան չէր կապում Խորհրդային Միության հետ և խստորեն քննադատում էր նրանց, ովքեր Հայաստանի և Սփյուռքի հայությանը համոզում էին համակերպվել անկախության կորստի հետ՝ ընդունելի դարձնելով մեկ կայսրության մասնիկ դառնալու գաղափարը¹⁵:

Ինքնությունը պայմանավորող անցյալի, պատմության հանդեպ վերաբերմունքի, ընկալման տարբերությունից ևս ծնվում է սփյուռքահայի հատվածային ինքնությունների և պարբերականներում դրանց արտացոլման նրբերանգներ հաղորդելու խնդիրը: ՀՅԳ-երիտարբեր փոխառնչությունների, Հայաստանի առաջին հանրապետության ստեղծման, Սարդարապատի հերոսամարտի, ինքնապաշտպանական կռիվների, Հայ դատի հարցում կուսակցությունների տարաձայնություններով պայմանավորված՝ «Արա-

¹² «Ազդակ»-ն արտերկրից արհեստականորեն ներմուծված «հայաստանասեր» բառով բնորոշում է 2 խմբի. մեկը, հայրենաբաղձությունից ելնելով, բարենտորեն նույնացնում է Հայաստանը օրվա իշխանության հետ, մյուսը Հայաստանի անունը շահագործում է ի նպաստ իշխանության, խորհրդայինը դավանում որպես նպատակ՝ դրան ստորադասելով հայրենիքը և Հայաստանը պայմանավորելով բացառապես խորհրդայինով (Հայրենասերն ու «Հայաստանասեր»ը, «Ազդակ», 26 հուլիսի, 1963 թ., թիվ 121):

¹³ Վանիկ, Հին ժողովրդի մոր վերելքը, «Արարատ», 8 հուլիսի, 1967թ., թիվ 201:

¹⁴ Արմեն Ազատ, Հայաստանի եւ սփյուռքի հայութեան փոխ-յարաբերութեան մասին, 22 հուլիսի, «Ազդակ», 1963թ., թիվ 117:

¹⁵ Ընկ. Բ. Փափագեանի խօսքը Հ.Յ.Գ.ի 75 ամեակին առիթով, «Ազդակ», 18 դեկտեմբերի, 1965թ., թիվ 244:

րատ»-ը, «Չարթոնք»-ն ու «Ազդակ»-ը հանդես էին գալիս այնպիսի դիրքերից, որ ընթերցողները սեփական ինքնությունն ընկալեին կուսակցական դիրքորոշման կաղապարայնությամբ: Օրինակ՝ հնչակյան պարբերականում լիովին անտեսվում էին Առաջին հանրապետության դերն ու նշանակությունը. «Հոկտեմբերը մեզի տուաւ պետականութիւն»¹⁶, «1918-ն 1920 Հայաստան անսահման, ողբերգական չափերով ունէր թշուառութիւն, համաճարակ, սով, անիշխանութիւն, եւ ահաբեկչական բռնակալութիւն: Բայց չունէր տարրական «ազատութիւն»...»¹⁷: Ռուսամետ դիրքորոշմանը համահունչ խելաքյորվում էին Սարդարապատի և պատմական այլ իրադարձություններ՝ հաղթանակի փառքը վերագրելով բոլշևիկյան բանակին¹⁸:

Հայ մշակույթի, հայեցի կրթության, դաստիարակության սերմանման հարցում պարբերականներն ընդգծված անջատողականություն չէին ցուցաբերում: Մի կողմից՝ ներկայացնում էին ազգային արժեքներն ու հայ մեծերին, մյուս կողմից՝ նպաստում էին այդ ժառանգության կրողը լինելու գիտակցության, ազգային հպարտության ձևավորմանը:

Ընդհանուր առմամբ երեք թերթերում էլ միացյալ ազգի, հայրենիքի, հայի ինքնության գաղափարն է շրջանառվում: Պարզապես թերթերից երկուսն այդ միացյալ հայրենիքի կենսագործումը տեսնում են խորհրդային վարչակարգով, իսկ մյուսը պայքարում է դրա դեմ: Որպես արդյունք՝ սփյուռքահայերի դիրքորոշումների, արժեքային կողմնորոշումների երկփեղկվածությունը հանգեցնում է մաս Խորհրդային Հայաստան-հայրենիք տարանջատման:

¹⁶ **Վանիկ**, Հոկտեմբերեան Յեղափոխութեան Յիսնամեակին՝ Անտոն Քոչինեանի ճառին առթիւ, «Արարատ», 24 նոյեմբերի, 1967թ., թիվ 8:

¹⁷ **Անդրեասեան Ա.**, Հայկական դատին նոր հանգրուանը, «Չարթոնք», 25 օգոստոսի, 1967թ., թիվ 275:

¹⁸ Տե՛ս **Չաղեթեան Գ.ր.**, Դաշնակցական շէֆերի Հայաստանէն փախցուցած գումարները եւ հաշուետուութիւնը, «Չարթոնք», 1968թ., փետրվարի 20, թիվ 122, **Աղան Տարօնեցի**, «Պատասխանատուները Տարօնի եղեռնին», «Չարթոնք», 1968, մարտի 26, թիվ 151, **Թորգոմ Վեգիբեան**, Մի քանի փաստեր խմբապետ Մեպոնի ազգադատ գործունեութիւնից, «Չարթոնք», 27 դեկտեմբերի, 1968, թիվ 78:

Ամփոփում

Ազգային ինքնությունը կողմնացույցի դեր է կատարում հայկական Սփյուռքի պարագայում: Միջավայրի ներգործությունը, այլ մշակույթի հետ միջնորդավորված շփումը անխուսափելի կնիք են քողում անհատի ինքնության վրա: Սփյուռքյան ինքնությունը ճկուն է, իրավիճակային, կարող է յուրաքանչյուր պահի դրսևորվել մեկ կամ մյուս կողմով: Այլացումն ու տարատեսակությունը հղացքային բնորոշումներն են այս երևույթի, ինչը տեսանելի է 1960-ականներին Սփյուռքի ամենակազմակերպված կենտրոններից մեկի՝ Լիբանանի օրինակով:

Քաղաքական կուսակցությունների և համապատասխան կրթամշակութային կառույցների կազմակերպված գործունեությունը, մի կողմից, նպաստում էր հայեցի դաստիարակմանը, ազգային արմատների պահպանմանը, մյուս կողմից՝ ընդգծված տարածայնությունների պատճառով հանգեցնում համայնքի ներսում խմբավորումների ձևավորմանը:

Գաղափարական այս տարասեռումները կուսակցությունների պաշտոնաթերթերում վերածվում էին բանավեճերի, որոնցում ակամայից ներգրավվում էին ընթերցողները: Յուրաքանչյուրի լսարանի համար ընդունելի էր դառնում տվյալ թերթի դիրքորոշումը, ինչը ի վերջո ինքնության բազմաշերտ դրսևորումների առիթ է դառնում:

**ИДЕНТИЧНОСТЬ ДИАСПОРЫ И ПРЕССА (ПРИМЕР АРМЯНСКИХ
ГАЗЕТ В ЛИВАНЕ)**

Ключевые слова: *пресса, Диаспора, Советская Армения, Ливан, идентичность диаспоры, «Аздак», «Зартонк», «Арарат», партийные периодические издания, Армянская община Ливана*

Сохранение национальной идентичности является ежедневной проблемой Армянской Диаспоры. Непосредственный контакт с иными культурами оставляет неизбежный след на идентичность человека. Поэтому возникает необходимость выделять идентичность Диаспоры. Она ситуативна и может каждый момент проявляться тем или иным образом. Даже в Армянской общине Ливана, которая в 1960-х годах считалась центром Армянской Диаспоры, трудно было говорить о единой идентичности армян Диаспоры. Люди одной общины различались своей партийной принадлежностью, направлением христианской веры, и посещали соответственно те культурные, спортивные, социальные и образовательные учреждения, которые были под влиянием конкретной партии или церкви. Выражение многослойной идентичности армян, проживавших в Ливане, можно найти в публикациях партийных газет 1960-х годов. Также заметно, как пресса прямым или косвенным образом придает окраску процессу формирования многослойных идентичностей или представлениям об идентичности.

SUMMERY

Avagyan G. A.

THE IDENTITY IN DIASPORA AND THE MEDIA (THE EXAMPLE OF ARMENIAN NEWSPAPERS IN LEBANON)

Key words: *Press, identity, Diaspora, Soviet Armenia, Lebanon, the identity in Diaspora, "Azdak", "Zartonk". "Ararat", party periodicals, Armenian community in Lebanon*

The preservation of the national identity is an everyday problem in Diaspora. Intermediary contact with a different culture leaves an inevitable imprint on a person's identity. Therefore, there is a need to distinguish the identity of the Diaspora. It is situational and can manifest itself in one or another way at every moment. Even in Lebanon, which in the 1960s was considered to be the center of the Armenian Diaspora, it was difficult to talk about a unified identity of the Armenians of the Diaspora. The people of one community differed in their party affiliation, the direction of the Christian faith and accordingly visited those cultural, sports, social and educational institutions that were influenced by a particular party or church.

The expression of multi-layered identity of the Armenians living in Lebanon can be found in the publications of party newspapers in the 1960s. It is also noticeable how the press directly or indirectly imparts colour to the process of forming multi-layered identities or to the notions of identity.